№ 3 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 — 1901 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 № 3

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնական փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մօտ լինենք ժողովրդին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դարձեալ դժբաղդութիւն. Բազում նաւթարդիւնաբերողների արտակարգ ժողովը. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄՕՏ ԼԻՆԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Նոր հարիւրամեակի սկզբնաւորութիւնը առիթ է տալիս մեզ կանգ առնելու այն հիմնական կէտերի վրա, որոնց աչքի առաջ ունենք մենք մեր գործունէութեան ընթացքում։ Անցեալ անգամ մենք հանդէս բերինք եղբայրակցութեան և գործակցութեան անհրաժեշտութիւնը՝ խելացի և բեղմնաւոր քաղաքացիական կեանք ստեղծելու մեր երկրում։ Մի քանի յօդուածներով մենք կը յիշեցնենք միւս կարևոր կէտերը։ Այս անգամ մենք կանգ կառնենք մեր մշտական նպատակներից մէկի վրա։

Ի՞նչ ցաւ ու հոգսեր ունի մեր ազգաբնակութիւնը, ինչո՞վ է նա ապրում, ինչպէ՞ս է նրա երկրագործութեան տարվայ բերքը, ի՞նչ բարոյական վշտեր են կրում ժողովրդի սիրտը, ինչ հիւանդութիւններ և ձախորդութիւններ են մաշում ժողովրդի գոյութիւնը—ահա մի շարք հարցեր, որոնք մշտապէս հետաքրքրել են մեզ և որոնց մենք հրապարակ ենք բերում առաջիկայում զբաղվելու համար։

«Մշակի» հիմնական նպատակներից մէկն է եղել՝ մօտ լինել ժողովրդին և ցոլացնել իր մէջ ժողովրդի այն կարիքները և ցանկութիւնները, որոնք ծառայում են նրա ապագայ զարգացման և բարեկեցութեան։ Իր կարողութեան չափ մեր լրագիրը աշխատել է մեր գաւառական կեանքի համար բարօմետրի, ծանրաչափի դեր կատարել և հաղորդել է տեղեկութիւններ գաւառի վիճակի մասին։ Կարևոր և անհրաժեշտ դէպքերում մենք օգտվել ենք այդ տեղեկութիւններից յարուցանելու խնդիրներ՝ գիւղատնտեսական և բժշկական օգնութիւն հացնելու, վաշխառութեան, կաշառակերութեան և հարստահարութեան ուրիշ արտայայտութիւնների դէմ կռուելու, պանդխտութեան վնասակար կողմերի դէմ մաքառելու, տնայնագործութիւն և ուրիշ արհեստներ տարածելու, տեղական ինքնօգնութեան զանազան ձևեր կազմակերպելու համար և այլն։

Մեր ազգաբնակութիւնը պէտք է ընտելանայ մտքի ամենաընդարձակ փոխանակութեան։ Հրապարակական քննութեան առաջ դնելով կեանքի բազմատեսակ հարցերը, հաղորդելով այն փոփոխութիւնները, որոնք նկատվում են իրականութեան մէջ, զուգընթաց առաջ բերելով այն փորձերը, որ արել են եւրոպական երկիրները, մենք կունենանք այն նիւթը, որ կարողութիւն կը տայ մեզ էական միջոցներ մշակելու մեր կեանքի անպատեհութիւնների դէմ կռուելու համար։

Մտքի ընդարձակ փոխանակութեամբ ամբողջ ազգաբնակութիւնը գործունեայ մի մտաւոր օրգան է դառնում, որ իսկապէս ազդում է կեանքի հարցերի լուծման վրա և այդպիսով հանդիսանում է հոգատար իր կարիքների վրա։ Որքան էլ մենք բարեխղճաբար ուսումնասիրելու լինենք ազգաբնակութեան կեանքը, մենք անկարող ենք իրերը լուսաբանել այնպէս պարզ և աչող, որքան ինքը ազգաբնակութիւնը, երբ նա կը սկսի ինքը խօսել, խորհրդածել և քննել։

Դիմում ենք մեր երկրի մէջ ցրված մտաւոր ոյժերին գործակցելու մեզ, որ մեր յարուցած ներկայ խնդիրը աչող լուծում ստանայ։ Ցուէք տեղեկութիւններ ժողովրդական առօրեայ կեանքի մասին, սովորեցրէք ժողովրդին գնահատելու մտքի փոխանակութեան առաւելութիւնները և ըմբռնելու հրապարակական քննադատութեան նշանակութիւնը։ Աշխատենք, որ մամուլը կարողանայ ընդարձակ կերպով արտայայտել ժողովրդի այն պահանջները, որոնք պէտք է նպաստեն նրա առաջադիմութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆ

Դարձեալ դժբաղդութիւն Ախալքալաքի գաւառում...

Դեռ մի տարի չէր անցել երկրաշարժի սոսկալի աղէտից, երբ Ախալքալաքի գաւառի գիւղացին դարձեալ մնաց անօգնական, դժբաղդ։ «Кавказъ» լրագրի թղթակիցը գրում է, որ այնտեղ ուղղակի սով է սկսվել եւ ազաչում է օգնութեան հասնել...

Ցայտնի է թէ ինչ նոր աղէտ գլորեց Ախալքալաքի գիւղացուն թշուառութեան անդունդը։ Ամառը Ախալքալաքի գաւառի արտերը ոչնչացրեց հացի բզէզը։ Ժամանակին «Մշակը» մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց այդ աղէտի մասին։ Սակայն կարծում էինք թէ աւերիչ բզէզների արշաւանքից գոնէ այնքան բան մնացած կը լինի գիւղացուն, որ նա կէս-[illegible]ած կարդէ ձմեռը մի կերպ կը հասնէ գարնանը։

Բանից դուրս է գալիս, որ այդպէս չէ. աւերմունքը այնքան մեծ էր, որ այժմ հարկաւոր է աղաչել հասարակութեանը օգնութեան հասնել՝ ազգաբնակութիւնը սովից ազատելու համար։ Ասում են, որ այժմեան աղէտը անհամեմատ ծանր է քան երկրաշարժի աղէտը. այժմ գիւղացին աւելի դժբաղդ դրութեան մէջ է, քան նոյն իսկ այն ժամանակ, երբ երկրաշարժը աւերակ էր դարձրել ամբողջ գիւղեր եւ նրանց բնակիչները մնացել էին բաց երկնքի տակ...

Ի՞նչ պէտք է անել։

Պէտք է, ի հարկէ, օգնել, նորից օգնել ախալքալաքցիներին։ Եթէ մի գաւառ տարվայ մէջ երկու անգամ դիմում է հասարակական բարեսրտութեան, կարեկից եղբայրական ձեռք է խնդրում, դա այն պատճառով չէ, որ այդ գաւառը ծոյլ է, չէ կարողանում իր հացը աշխատել։ Ո՛չ։ Բնութեան աղէտներն են ոչընչացնում նրա դաժան աշխատանքները։ Ինչպէս երկրաշարժն է աղէտ, որի դէմ մարդը ոչինչ չէ կարող անել, այնպէս էլ հացի բզէզը, գոնէ առ այժմ, քանի որ ժամանակները ոչինչ հնար չեն գտել նրա դէմ, մնում է նոյն անյաղթելի պատահարը, նոյն բնական դժբաղդութիւնը։ Եւ այդ դժբաղդութեան ենթարկված ազգաբնակութիւնը իրաւունք ունի ամենց քաշվելու օգնութեան կանչել։

Օգնել անհրաժեշտ է, օգնել որքան կարելի է շուտ։

Բարեբաղդաբար, դեռ գործում են այն երկու կոմիտէները, որոնք կազմված էին երկրաշարժի ժամանակ՝ յատկապէս ախալքալաքցիներին օգնելու համար։

Ահա այդ ձեռնհաս պաշտօնական մարմիններն էլ կարող են հասարակութեան օգնութիւնը հացնել հացի բզէզի զոհ դարձած, քաղցած ու անօգնական ախալքալաքցիներին։

«Ցիշենք—ասում է «Кавказъ»-ի թղթակիցը—որ հազարաւոր կանայք եւ երեխաներ չունեն հացի մի չոր կտոր»։

Ցիշեցէք, ընթերցող, այդ կանանց եւ երեխաներին եւ օգնեցէք։

ԲԱԳՈՒԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ

Նաւթարդիւնաբերողների ընդհանուր ֆօնդի համար՝ ներկայ 1901 թ. ընթացքում նախատեսվում է եկամուտ 1.344.000 ռուբլի, իսկ ծախք՝ 1.939.000 ռուբլի, դեֆիցիտ 595,000 ռուբլի։

Եկամուտի գլխաւոր աղբիւրները կազմում են՝ նաւթի տուրքը եւ նաւթահանքերից հոսող ջրերից կազմված ընդհանուր առուների տուած նաւթը։ Ենթադրվում է, որ տարվայ ընթացքում պիտի արդիւնաբերվի 550 միլ. պուդ նաւթ. իւրաքանչիւր պուդ նաւթի համար ստանալով $^1/_{10}$ կ. պուդավճար, պիտի գոյանայ 550.000 ռուբլի։ Իսկ առուներից ժողովելի նաւթի քանակութիւնը հաշվում է 1.300.000 պուդ, գնահատելով պուդը 14 կոպ., ստացվում է 182.000 ռուբլի։

Ծախսերը բաժանվում են երկու տեսակի—մշտական տեղի ունեցող ծախքեր եւ միանուագ։ Մշտական ծախսերի մէջ առաջին տեղը բռնում է բժշկական օգնութեան համար յատկացրած գումարը՝ 249.995 ռուբլի։ Այդ գումարով պահվում են թէ նաւթահանքերի եւ թէ գործարանների շրջանագծերում երկու հիւանդանոց, երկու դեղատուն, չորս ամբուլատորիա եւ մի ժամանակաւոր ապաստարան։

Թէեւ բժշկական օգնութեան գործը կանոնաւոր հիմքերի վրա է դրված, բայց դեռ գոհացուցիչ չէ. բոլոր պահանջներին ոչ միայն լիակատար բաւարարութիւն չէ տրվում, այլ եւ յաճախ զանց է առնվում։ Պահանջը սաստիկ մեծ է։ Յաճախ պատահում է, որ մի բժիշկ մի օրվայ ընթացքում հարկադրված է լինում 100—150 հիւանդ ընդունել... Բայի վերոյիշեալ երկու հիւանդանոցից մօտիկ ապագայում պիտի բացվի եւ մի մանկական հիւանդանոց՝ 30 մահճակալի պատրաստութեամբ։ Այդ հիմնարկութեան նախաձեռնող է հանդիսանում «Կասպեան» կոչված մի ընկերութիւն, յանձին խորհրդի նախագահ Պ. Ղուկասեանի, որ այդ ընկերութեան գլխաւոր բաժնետէր եւ կառավարիչն է։ «Կասպեան» ընկերութիւնը, ի յիշատակ իր 25-ամեայ գոյութեան, նուիրում է 45—50 հազար ռուբլի մանկական հիւանդանոց չինելու համար, իսկ նաւթարդիւնաբերողների ժողովը վճռում է հոգալ հիւանդանոցի ընթացիկ ծախքերը, որ ըստ նախահաշուի կազմում է տարեկան 20 հազար ռուբլի։

Ինչպէս միշտ, այս տարի էլ ժողովականների կողմից լսելի էին լինում տրտունջ, դժգոհութիւն՝ ուղղած խորհրդի գործունէութեան դէմ։ Եւ իզուր, անհիմն չեն լինում այդ տրտունջն ու դժգոհութիւնը։ Որոշումներ են տեղի ունենում, ժողովը վճիռներ է կայացնում, նախահաշիւ է հաստատում եւ սպասում, որպէս զի այդ վճիռները կատարվեն, որոշումները իրականանան, բայց իզուր. շատ որոշումներ եւ վճիռներ կիսակատար կամ բոլորովին անկատար են մնում։ Ամեն տարի հարիւր հազարներ են յատկացվում նոր ճանապարհներ չինել տալու, ճանապարհներ վերանորոգելու համար, բայց այնուամենայնիւ չը կան ոչ միայն կարգին ճանապարհներ, այլ եղածներն էլ անտանելի, անանցանելի դրութեան են հասցրված։ Սա ակներեւ մի իրողութիւն է, անհերքելի մի փաստ, որ ամեն մի նաւթարդիւնաբերող, ամեն մի անցորդ պնդել կարող է, եթէ դժբախտութիւն է ունեցել անցնելու դէպի նաւթահանքերը կամ գործարանների կողմերը, մանաւանդ անձրեւային օրերը, ցեխ եղած ժամանակ։ Ոչ միայն սայլերի, կառքերի անիւներ են կոտրատվում, ճանապարհին մնում, այլ եւ ժամերով, նոյն իսկ օրերով կանգ է առնում երթեւեկութիւնը, արգելառիթ մի հանգամանք, որ խլում է ժամանակ, դանդաղեցնում եռանդալի մի շարժում, որ նաւթային արդիւնաբերութեան անհրաժեշտութիւնն է կազմում։ Ինչպէս չը զայրանալ, ինչպէս չը բողոքել, ինչպէս տրտունջ չարտայայտել այն մարմնի դէմ, որ կոչված է ղեկավար հանդիսանալու, այդպիսի արգելառիթ հանգամանքների առաջն առնելու համար, բայց անհոգ է գտնվում, ձեռնհաս չէ լինում ստանձնած ղեկավարութիւնը նպատակայարմար կերպով գործադրելու համար... եւ ընդհանուր էր տրտունջը, կատաղի էր բողոքը այս տարվայ ժողովականների մէջ։

Այդ էր վկայում տիրապետող տրամադրութիւնը, ժողովի հէնց առաջին նիստերից մասնաւոր քչփչոցները, անսովոր իրարանցումները այդ էին ապացուցանում։ Բայց ինչպէս միշտ, այս տարի եւս այդ բոլորը ակամայ յիշեցնում էր ժկների վերաբերմամբ ասած յայտնի առակը. ճիշդ է, ակներեւ է, որ «կատուն» վտանգաւոր է, նա գիշատիչ է, նա մահ է նիւթում, պէտք է նրանից ազատվել, նրա վզից մի զանգակ կախել, որպէս զի ամեն անգամ հանդէս գալուց իմացվի։ Հրաշալի միտք է, բայց ո՞վ պիտի իրագործէ այդ, ո՞վ պիտի յանդգնի, կատուի դէմ-յանդիման դուրս գալ փրկարար զանգակը նրա վզից կախելու համար... Չէ՞ որ մահ է սպառնում, չէ՞ որ անխուսափելի է դառնում վտանգը։ Բայց անապասելի յանդգնութիւնը տեղի ունեցաւ. զանգակը հնչեց. արդէն պարզ էր, որ ամեն ինչ պատրաստ է, փորձ է անվում հաստաձակ քայլեր անելու...։ Ժողովականներից մէկը խորհրդի տուած բացատրութիւնները՝ ճանապարհների խայտառակ դրութեան վերաբերմամբ, անհիմն է գտնում, նա այդ վերագրում է խորհրդի անփոյթութեան եւ առաջարկում է, որ ժողովի կողմից այդ նկատի առնվի, որպէս զի ապագայում նոյնանման անփոյթութիւններ տեղի չունենան այլ եւս։ Խորհուրդը չէ մարսում այդ նկատողութիւնը, նա

վիրաւորվում է, վիրաւորվում է, որ «խայտառակ» ճանապարհների մասին իր տուած բացատրութիւնները չեն յարգվում։ Նա այդ առաջարկութիւնը համարում է անպատուութիւն։ Բարձրանում է անասելի աղմուկ, հարայ-հրոց։ Մոռացվում է եւ՝ առաջարկութիւն, եւ՝ ճանապարհ, եւ՝ «զանգակ» կախելու հարց։ Նոյն իսկ նրանք, որոնք քիչ առաջ միանգամայն համամիտ էին «յանդուգն կոչված» առաջարկութեան, այժմ պահանջում են յետ վերցնել այդ առաջարկութիւնը...

Առաջարկութիւնը վերջ ի վերջոյ այլ կերպարանք է ստանում եւ որոշվում է քուէարկել, թէ ժողովը ինչպէս է վերաբերվում խորհրդի գործունէութեան ընդհանրապէս եւ մասնաւորապէս ճանապարհների հարցին—գոհացուցիչ, թէ ոչ։ Խորհրդի անդամները ձեռնպահ են մնում։ Դրանց, այդ մեծ ֆիրմաների ներկայացուցիչների օրինակին, հետեւում են եւ միւսները, ամենքը ձեռնպահ են մնում համարեա, ձեռնպահ է մնում նոյն իսկ առաջարկութիւն անողը, խորհրդին քիչ առաջ անվոյթութեան մէջ մեղադրողը. յարուցվում է ընդհանուր ծիծաղ... Ոչ ոք չէ յանդգնում ձայն, ծպտուն հանելու, խորհրդի գործունէութիւնը գոհացուցիչ է գտնվում. գաղտնի քուէարկութեան հետեւանքը այդ է յայտարարում բուռն ծափահարութեամբ։

Այդպէս է միշտ. ով ինչ ուզում է, թող խօսէ, ինչ առաջարկութիւններ ուզում են, թող անեն, ոչ մի որոշում տեղի չի ունենայ, ոչ մի վճիռ չի կայանայ, եթէ համամիտ չէ խորհուրդը, եթէ չը կամենան խորհրդի անդամները՝ մեծ ֆիրմաների—Եղբ. Նօբէլի, Մանթաշեվի, «Կասպեան» ընկերութեան, Բաքուի (Каспійск. Черноморск.) ներկայացուցիչները։ Նրանք այդ շատ լաւ գիտեն եւ օգտվում են իրանց դրութիւնից, այնպէս որ ընտրութեան ժամանակ ոչ միայն չեն սեւանում, այլ նոյն իսկ նազ ու թուզ են անում, խնդրել են տալիս մի քանի անգամ, ապա ընտրվում... Այդ վարք ու բարքերն են ստեղծված, դրանք են տիրապետում նաւթարդիւնաբերողների աշխարհում։

Անցեալ ժողովի որոշումներից անկատար մնացած խնդիրների շարքին է պատկանում նաւթահանքերում եկեղեցիներ չինելու խնդիրը, որ ուշադրութեան ենթարկվեց եւ այս տարի։ Որոշվել է չինելու երկու եկեղեցի՝ ուղղափառների եւ հայ լուսաւորչականների համար։ Ուղղափառների համար արդէն ձեռնարկվել է եւ չինվում է։ 25 հազար բուբլու չափ մնացել է, 30 հազար բուբլու էլ պէտք կայ։ Նաւթարդիւնաբերողների ժողովը միաձայն որոշեց տալ այդ գումարը, որ չինութիւնը վերջանայ։ Մի եւ նոյն ժամանակ հետաքրքրվեց իմանալ հայ լուսաւորչականների եկեղեցու մասին։ Յայտնվեց, որ դեռ թոյլտուութիւն չէ ստացվել։ Ժողովը այդ մասին խնդրեց Կովկասի կառավարչապետի ներկայացուցչին, որ ներկայ էր այդ նիստին, որպէս զի նա միջնորդէ կարելոյն չափ շուտով լուծումն տալու այդ հարցին։ Հայ լուսաւորչականների այդ եկեղեցին չինել տալու համար նաւթարդիւնաբերողների ֆոնդից ոչինչ չը պիտի տրվի. նա պիտի կառուցվի մասնաւոր միջոցներով։

Նաւթահանքերի ոստիկանական կարգապահութեան վերաբերեալ յատուկ ժամանաժողով է կազմված փոխ-նահանգապետի նախագահութեամբ, որ մշակում է կանոնադրութիւն՝ կանոնաւորելու համար ոստիկանական հսկողութիւնը ընդհանրապէս։ Մտադրութիւն կայ փոխ-ոստիկանապետութիւն հիմնել, որին ենթակայ պիտի լինի նաւթահանքերի հսկողութիւնը եւ կարգապահութիւնը։

Նաւթարդիւնաբերողների արտակարգ ժողովը որոշեց խնդրել նահանգապետին, որ այդ մանաժողովի մէջ նաւթարդիւնաբերողները նոյնպէս իրանց ներկայացուցիչ ունենան։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Դեկտեմբերի 27-ին

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի մեր քաղաքային վարչութիւնը որոշել էր յանուն Պուշկինի քաղաքային գրադարան եւ հիւանդանոց բանալ։ Հայոց Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղը փակվելով, իր գրադարան-ընթերցարանը իր բոլոր գրքերով եւ իրեղէններով ընծայեց քաղաքային վարչութեան որոշած գրադարանին, որն այժմ արդէն գոյութիւն ունի։ Իսկ հիւանդանոցի չինութիւն կառուցանելու եւ առհասարակ հիւանդանոցը գլուխ բերելու համար իր ժամանակին ընտրվեց մի մասնաժողով նախկին գաւառապետ Պավլովի կնոջ՝ տիկին Պավլովայի նախագահութեամբ։ Այս մասնաժողովը գործը բաւական առաջ տարաւ. արդէն կազմել են հիւանդանոցի չինութեան մակարդակը եւ մինչեւ 500 բուբլի փող են հաւաքել։ Իսկ այս տարի էլ հանգուցեալ գեներալ-մայոր Ի. Մելիք-Հայկազեանի այրին, տիկ. Վ. Մելիք-Հայկազեան, ի յիշատակ իր ամուսնու, նուիրեց յիշեալ հիւանդանոցի չինութեան համար 200 ր.։ Ուրեմն մինչեւ այսօր կայ առձեռն գումար ընդամենը 700 բուբլի։

Սակայն գաւառապետ Պավլովի եւ մասնաժողովի քարտուղար՝ հարկային տեսուչ Պէշէի քաղաքից պաշտօնով տեղափոխվելու պատճառով, մասնաժողովը մնաց առանց նախագահի եւ քարտուղարի։ Ուստի գործը առաջ տանելու եւ պակասած անդամների տեղը լրացնելու համար՝ դեկտեմբերի 10-ին, քաղաքիս առագ. Գ. Մովսիսեանի հրաւէրով եւ նախագահութեամբ, տեղի ունեցաւ յիշեալ մասնաժողովի նիստը։ Ժողովը միաձայն նախագահ ընտրեց գեներալ-մայոր Նիկիտինի կնոջ, իսկ դուրս եկած անդամների տեղ ընտրվեցին տիկիններ՝ Բուդուղեան, Գամռեկելեան, Զաթալբաշեան, Վ. Մելիք-Հայկազեան եւ երկու քոյր Մութաֆեաններ։ Իսկ մասնաժողովի քարտուղար ընտրվեց նոտարիուս՝ պ. Գ. Բուդուղեան։

Ցոյս ունենք, որ մասնաժողովը այժմ աւելի եւս գործը առաջ կը տանէ եւ հիւանդանոցի հիմնարկութիւնը օր առաջ գլուխ կը բերէ։ Ինչպէս լսեցինք, յարգելի տիկին-նախագահը մտադիր է միւս ամսին, Թիֆլիսում, քաղաքիս հիւանդանոցի օգտին մի պարահանդէս տալու։ Ցանկանք աջողութիւն։ Մի այդպիսի հիմնարկութեան գլուխ բերելը, որպիսին է հիւանդանոցը, Ախալցխայի պէս կարօտ քաղաքում, միանգամայն պատիւ կը բերէ մասնաժողովի անդամներին։

Մի քանի օր առաջ ձմերային կլուբի դահլիճում տեղի ունեցաւ տեղական թատերասէրների ներկայացումը՝ յօգուտ քաղաքային Պուշկինեան գրադարան-ընթերցարանի։ Խաղացին «Մեծապատիւ մուրացկաններ» Պարոնեանի, եւ «Երկու քաղցածներ»։ Դահլիճը համարեա լիքն էր հանդիսականներով։ Խաղը ընդհանրապէս լաւ անցաւ եւ դերակատարներից շատերը արժանացան ծափահարութիւնների։ Մուտք եղաւ 150 բուբլի։ Միանգամայն գովելի է մեր երիտասարդների եռանդն ու աշխատանքը։ Շնորհակալութեան արժանի է մանաւանդ օր. Շ. Դուշուկեանց, չը նայելով որ առաջին անգամն է բեմ դուրս գալիս. Շողակաթի դժուար դերը նա գեղեցիկ կերպով կատարեց։ Ինչպէս լսում ենք, մեր սիրողները մտադիր են մի շարք ներկայացումներ տալ յօգուտ քաղաքիս երկու բարեգործական հիմնարկութիւնների, այն է՝ յանուն Պուշկինի նոր բացվելիք հիւանդանոցի եւ գրադարան-ընթերցարանի օգտին։ Այժմ էլ պատրաստում են մի նոր ներկայացում տալու։ Խաղալու են այս անգամ «Ասլան-Բալասի» պիէսը եւ «Նիսիա» վոդեվիլը։

Քաղաքացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ առաւօտ, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, Թիֆլիսում վախճանվեց Շամախու թեմի առաջնորդ Եսայի արքեպիսկոպոս Աստուածատրեանց։ Հանգուցեալը Թիֆլիսեցի էր եւ մեր կուսակրօն հոգեւորականութեան աչքի ընկնող եւ լուսաւոր անդամներից մէկն էր։ Եսայի արքեպիսկոպոսը ուսման ծարաւ ունենալով ու դեռ Մանկունու ժամանակները եռանդուն բողոքող լինելով էջմիածնական այն ժամանակվայ կարգերի դէմ, հեռանում է էջմիածնից եւ գընում է Պարիզ ուսումը շարունակելու։ Մի առ ժամանակ Պարիզ մնալուց յետոյ հանգուցեալը գնում է Լօնդոն եւ այնտեղի հայ համայնքի հոգեւոր հովիւ է ընտրվում։ Մի քանի տարի Լօնդոն մնալուց եւ իր հոգեւոր պաշտօնը ազնութեամբ կատարելուց յետոյ, Եսայի արքեպիսկոպոսը վերադառնում է Կովկաս եւ նշանակվում է Պարսկաստանի եւ Հնդկաստանի առաջնորդ, ուր նոյնպէս պատուով վարելով իր պաշտօնը, վերադառնում է էջմիածին եւ նշանակվում է սինոդի անդամ։ Մի տարի առաջ միայն հրաժարվելով սինոդի անդամի պաշտօնից, նշանակվեց Շամախու թեմի առաջնորդ, ուր, հիւանդութեան պատճառով, չը կարողացաւ աչքի ընկնող գործունէութիւն ցոյց տալ։ Հանգուցեալը 1883 թ-ի վերջում, երբ դեռ վարդապետ էր, նուիրեց Ներսիսեան դպրոցին 5000 բուբլի այն պայմանով, որ մահվանից յետոյ այդ գումարի տոկոսները գործադրվեն դպրոցում որդեգիր կամ թոշակաւոր աշակերտներ պահելու համար։ Այժմ այդ գումարը հասել է 9000 բուբլու։ Եսայի արքեպիսկոպոսը պարապել է եւ գրականութեամբ. նա հրատարակել է հայոց պատարագի արարողութեան անգլիերէն թարգմանութիւնը, որ հայերէն բնագրի հետ միասին տպագրվել է Լօնդոնում 1887 թ-ին։

—

Զրօհնէքի սովորական հանդիսաւոր թափորը դէպի Ցորդանան, չնորհիւ պարզ եւ տաք եղանակի, այս տարի շատ աջող անցաւ։ Վանքի մայր եկեղեցու վերանորոգութեան պատճառով՝ եկեղեցական թափորը սկսվեց ս. Նշան եկեղեցուց եւ ժողովրդի խուռն բազմութեան ուղեկցութեամբ հասաւ Վանքի կղզին, ուր շինված էր Ցորդանանը։ Կուր գետի երկու ափերին հաւաքվել էր հանդիսականների անհագին բազմութիւն։ Զը նայելով ոստիկանութեան արգելքին՝ հրացաններ եւ ատրճանակներ չարձակել հանդէսի ժամանակ դժբաղդ դէպքերից խոյս տալու համար, այնուամենայնիւ այս ու այն կողմից լսվում էին ատրճանակների ձայներ։

—

XIX-րդ դարի վերջին օրը, կէսօրից յետոյ, Թիֆլիսի Առեւտրական ուսումնարանում, դիրեկտոր Մակս Ֆիշերի կարգադրութեամբ, կատարվեց տօնածառի հանդէս այն աշակերտների համար, որոնք տարվայ սկզբից մասնակցել էին եկեղեցական երգեցողութեան, մանկական առաւօտներին եւ այլ հանդէսներին։ Ռուսաց լեզուի ուսուցիչ պ. Բլատով, դիմելով աշակերտներին, ասաց. «Դուք այստեղ, տաք սենեակում, տօնածառի էք եկել, բայց կան ձեզ պէս երեխաներ, որ դրսում ցրտից փայտանում են», եւ կարդաց Դոստոեվսկու այն պատկերը, ուր տօնածառի գիշերը մայրը մեռնում է քաղցից եւ ցրտից սենեակում, իսկ փոքրիկ տղան,—դրսում՝ հարեւանի տօնածառը պատուհանից տեսնելիս զմայլվում է։ Նա կարդաց այնքան ազդու, որ աշակերտները յուզվեցին։ Յետոյ ցոյց տուեց մոգական շարժուն պատկերներ։ Ապա երգեցին գերմաներէն, ռուսերէն, հայերէն եւ վրացերէն երգեր։ Ի վերջոյ դիրեկտորը դիմեց աշակերտներին մասաւորապէս հետեւեալ խօսքերով. «Դուք, փոքրիկներ, մտնում էք XX-րդ դարը եւ դուք XX-րդ դարի մարդիկ էք։ Այդ դարից շատ բան է սպասվում։ Հետեւապէս ձեզանից, նոր սերունդից, մենք շատ բան ենք սպասում։ Ձեզ վրա դրված են մեծ յոյսեր, աշխատեցէք այդ յոյսերը արդարացնել։ XX-րդ դարը տալիս է ձեզ ամեն մի յարմարութիւն առաջադիմութեան համար, օգտվեցէք նրանից եւ իզուր մի անցկացնէք ձեր ժամանակը։ Շնորհաւորում եմ XX-դ հարիւրամեակը, բարեւեցէք ձեր ծնողներին եւ յայտնեցէք իմ շնորհակալութիւնը, որ նրանք արձակեցին ձեզ մեզ մօտ»։ Ամենքը քաղցրաւենիք ստացան եւ ապա ցրվեցին։

—

Պետերբուրգի ռուսաց գրողների դաշնակցութեան դեկտեմբերի 31-ի նիստում, «Русск. Вѣд.» լրագրի խօսքով, Միլիւկով զեկուցեց ժողովին Դաշնակցութեան յանձնաժողովի մշակած նախագիծը՝ հեղինակային իրաւունքի մասին։ Նախագիծը երկարատեւ եւ ջերմ վիճաբանութիւններ առաջացրեց։ Վերջը ժողովը վճռեց սահմանափակել գրականան սեփականութեան իրաւունքի ժամանակամիջոցը 25 տարով։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրութիւնը արդէն մշակել է քաղաքային դասակարգերը վերակազմելու նախագիծը եւ շուտով այդ նախագիծը քննութեան ենթարկելու համար կը գումարվի մի յանձնաժողով զանազան վարչութիւնների ներկայացուցիչներից։ Նախագիծը չոչափում է միայն մէչչանների եւ արհեստաւորների դասակարգը, իսկ առեւտրականների դասակարգը անձեռնմխելի է մնում նախ՝ այն պատճառով, որ նա շատ փոքրաթիւ է (վաճառականական հասարակութիւններ գոյութիւն ունեն միայն մի քանի քաղաքներում), եւ երկրորդ՝ որ այդ հասարակութիւնների ինքնավարութիւնը ոչինչ թիւրիմացութիւններ չէ առաջացնում եւ մինիստրութեան մէջ ամբողջ տասնեակ տարիներ ոչ մի գանգատ չէ մտել առեւտրական վարչութիւնների եւ վաճառականական դասակարգերի աւագների դէմ։

—

Յունվարի 1-ից մտցնվում է նոր տակառ փող փոխադրելու համար պօստով 1000 բուբլուց բարձր։ 1000 բուբլուց մինչեւ 2000 ր. փոխադրելու համար կառնվի 2 ր. 50 կոպէկ. իսկ 2000 բուբլուց բարձր գումարներ փոխադրելու համար կը վերցվի $^1/_8$-ական կոպէկ իւրաքանչիւր բուբլուց։

—

Գանձակում, սեպտեմբերի 30-ին, վախճանվեց Գուստաֆ Խրիստոֆորովիչ Եակոբսոն, Գանձակի նահանգապետի օգնականը, որ սկսած 1883 թ-ից վարում էր այդ պաշտօնը։ Հանգուցեալի թաղմանը, որ տեղի ունեցաւ յունվարի 2-ին, ներկայ էին, բացի պաշտօնատար անձերից, բազմաթիւ քաղաքացիներից եւ դպրոցների աշակերտներից, նաեւ Գանձակի նահանգի զանազան տեղերից յատկապէս այդ թաղմանը ներկայ լինելու համար եկած անձինք։ Հանգուցեալը յայտնի էր որպէս հասկացող եւ գործունեայ պաշտօնեայ։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Բանտից փախած բիլիջեցի Ռամազան Մամէդ օղլի նորերուսս կալանաւորվեց Դիվիչու մահալում։ Այդ չարագործից գաւառը ազատված է»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Քաղաքային ձայնաւորների ընտրութիւնները ընկանել է նահանգական իշխանութիւնը այն պատճառով, որ թուրքերից քիչ ձայնաւորներ են ընտրված։ Նոր ընտրութիւն նշանակված է փետրվարի 1-ին»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Համաձայն հոգեւոր բարձր իշխանութեան շրջաբերականին, երկու անգամ ծխականների ժողով գումարվելուց յետոյ, վերջապէս օրինաւոր, գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց 38 ձայնով պ. Մ. Ղազարեանը նոր երէցփոխ։ Զը նայած, որ առաջին ժողովում նոյն իսկ 47 ձայնով ընտրված էր պ. Ղազարեանը, բայց մի քանի անտեղի խօսակցութիւնները առիթ տուեցին առաջին ժողովը անկանոն համարելու։ Հին եւ նոր երէցփոխի հաշիւները ստուգելու համար ընտրվեցին նաեւ երկու հաշուեսեաներ՝ պ.պ. Գր. Բալասանեան եւ Մուշեղ Ներսէսեան։ Շուտով կը ստուգվեն հին երէցփոխի հաշիւները»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Խաչմազում, ինչպէս պատմում են այնտեղից եկողները, երեք օր սարսափելի ձիւն է եկել. պօստի ձիաները կոտորվել են ճանապարհին. պօստը 3 օր չէ ստացվել քաղաքում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Զուղա, դեկտեմբերի 10-ին

Նոյեմբերի 26-ին տեղի ունեցաւ նախկին «Որբուհեաց» խնամակալ ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ընկերութիւնը գոյութիւն ունի մօտ 7 տարի, սահմանափակված շատ չընչին գործունէութեամբ։ Զքաւոր աշակերտուհիներին մատակարարել է դասական պիտոյքներ եւ զգեստ, ծախսելով տարեկան միջին թւով 50 թուման։ Ուստի զարմանալի չէ, որ ընկերութիւնը հասարակութեան կողմից մեծ քաջալերութիւն չէ գտել եւ ներկայումս դրամագլուխը հազիւ 600 թումանի է հասնում։

Աչքի առաջ ունենալով այդ չնչին գործունէութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից այստեղի ու շրջակայ հասարակութեան մեծամեծ կարիքները լուսաւորութեան գործում, բարոք համարվեց ընկերութեան անունը եւ կանոնադրութիւնը փոխել։ Նոյեմբերի 26-ի ընդհանուր ժողովը որոշեց նախկին ընկերութիւնը անուանել՝ «Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն Նոր-Զուղայում» եւ նոր կանոնադրութիւնը ուղարկվեց թեմական առաջնորդին ի հաստատութիւն։ Նոյն ժողովում նախկին գանձապահի եւ քարտուղարի փոխարէն ընտրվեցին տիկիններ Մ. Մ. Ցարութիւնեան եւ Ա. Պապեան։

Այսուհետեւ, երբ վարչութեան առաջ բացված է աւելի լայն ասպարէզ, յոյս ունենք, որ նա կը գործէ աւելի եռանդով, որով իր կոչումը արդարացրած կը լինի եւ հասարակութեան համակրութիւնը կը վայելէ թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս, որի կարիքը շատ եւ շատ անհրաժեշտ է՝ ընկերութեան նպատակները իրագործելու համար։

Դեկտեմբերի 3-ին, կէսօրից յետոյ, օրիորդաց նորակառոյց Ս. Կատարինեան դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ առաջին ծնողական ժողովը։ Ժողովի ժամանակ երկու սեռի սաներից պատրաստված խումբը երգեց մի քանի երգեր, կարդացին ոտանաւորներ։ Դասախօսեցին երկու

սեռի դպրոցների տեսուչ պ. Մ. Յարութիւնեանցը «Դպրոցական դիսցիպլինայի» մասին, փոխ-տեսուչ պ. Գ. Պապեանը «Մտաւոր, բարոյական, ֆիզիքական կրթութեան» մասին եւ Ի. վարդապետ Տէր-Վարդանեանցը՝ «Ծնողների պարտականութեան» մասին։ Ուսումնական վարչութեան այդ քայլը նպատակայարմար է եւ ցանկալի, որ ապագայում յաճախ կրկնվէին ծնողական ժողովները, որով թէ ծնողները եւ թէ դպրոցը զգալի օգուտներ կարող էին ստանալ։ Յաւելով պէտք է ասենք, որ այստեղ ընտանեկան դաստիարակութիւնը հաւասարապարակայում է, իսկ Քրիստոսի աւետարանը զէնք դարձնող միսիոնարները միմիայն մոլորեցնում եւ աղաւաղում են ժողովրդի բնաւորութիւնը։

Պ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսի գերմանական դեսպան Մարշալ ֆօն-Բիբերշտէյնի պահանջով, Թիւրքիայի հայրողոքականների պետին տրված է սուլթանի բէրաթ, որով չնորհվում են նրան նոյնպիսի իրաւունքներ եւ արտօնութիւններ, որպիսիք վայելում են ուրիշ դաւանութիւնների պատրիարքները Թիւրքիայում։

—«Daily News» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ ռուսաց կառավարութիւնը, ռուս-չինական դաշնագիրը կապելու հետ միաժամանակ, համաձայնութիւն հաստատեց նոյնպէս Պարսկաստանի հետ։ «Շահը,—գրում է անգլիական լրագիրը,—պարտաւորվեց չեզոքութիւն պահպանել այն դէպքում, եթէ Ռուսաստանը խանված կը լինի Հեռու-Արեւելքում տեղի ունեցած բարդութիւնների մէջ եւ, անհրաժեշտութեան դէպքում, պարտաւորվեց թոյլ տալ ռուսաց զօրքերին անցնել Պարսկաստանի միջով։ Համաձայնութիւնը կապված է մէկ տարի ժամանակամիջոցով։ Խիվայի եւ Բուխարայի կառավարիչներից ռուսաց կառավարութիւնը խոստում առաւ, որ նրանք, պատերազմի դէպքում, ռուսաց գեներալների կարգադրութեան տակ կը դնեն տեղական զօրքերը։»

—Լրագիրները հաղորդում են, որ յարաբերութիւնները Ֆրանսիայի եւ Վատիկանի միջեւ, որոնք սաստիկ լարված էին վերջին ժամանակները, շատ լաւացան։ Պարիզի պապական դեսպանը Հռոմից հրաման ընդունեց մնալ իր պաշտօնում մինչեւ անգամ այն դէպքում, եթէ պարլամենտն ընդունի միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծը։ «Echo de Paris» լրագիրը հաղորդում է, որ Վատիկանի հետ հաշտութիւնը ձեռք է բերված ֆրանսիական կառավարութեան արած զիջումի գնով նոր եպիսկոպոսներ նշանակելու հարցի մէջ։ Այդ հարցի մէջ Վալդէկ Ռուսսօի մինիստրութիւնը իբր թէ զիջել է բոլոր կէտերում եւ շուտով կը նշանակէ Վատիկանին հաճելի եպիսկոպոսներ։ Սակայն շատ լրագիրներ չեն հաւատում «Echo de Paris» լրագրի այդ լուրին։

—Ի նկատի ունենալով, որ շուտով Ունգարիայում տեղի են ունենալու ընդհանուր պարլամենտական ընտրութիւններ, ունգարական անկախների պարագլուխ Ֆրանց Կօշուտ մի շրջաբերական հրատարակեց, որի մէջ մատնացոյց է անում այդ ընտրութիւնների մեծ նշանակութեան վրա, որովհետեւ, Կօշուտի կարծիքով, ունգարական ապագայ պարլամենտը, ի նկատի ունենալով աւստրիական անցքերը, հարկադրված կը լինի փոխել աւստրօ-ունգարական յարաբերութիւնների հիմքը եւ աւստրօ-ունգարական նոր համաձայնութիւն կը կայացնէ նոր հիմքերի վրա։

—Կ. Պոլսից Բերլին ուղարկվեց մի դեսպանութիւն՝ Վիլհելմ կայսրին յանձնելու սուլթանի ինքնագիր նամակը։ Մասնաւոր տեղեկութիւնների հիման վրա, նամակի մէջ սուլթանը խօսում է ոչ միայն Բաղդադի երկաթուղու կառուցման եւ ուրիշ արտաքին գործերի մասին, այլ եւ այն դժուարութիւնների մասին, որ առաջացնում է ժամանակի մինիստրութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը կատարելապէս անօգնական է եւ չը գիտէ, թէ ինչ պէտք է անէ այն դէպքում, եթէ ժամանակը մեծ չափեր ընդունէ։ Կ. Պոլսի առեւտրական շրջանները երկիւղ են կրում, որ նաւերի համար սահմանված կարանտինը ծանր հետեւանքներ կառաջացնէ առեւտրական գործերում։

—Բէյտերի գործակալութեանը» Կապշտադտից հաղորդում են, որ անգլիացիների մօտ գերի բռնված բօէրների թիւն է 15,182, չը հաշուելով այն 521 անձանց, որոնց ազատութիւն է տրված ազնիւ խօսքով։

—Սուլթանի իրադէպ հաստատված է զինուորական մինիստրի զեկուցումը՝ նոր հեծելազօր գնդեր կազմակերպելու մասին։ Այդ գնդերը կը կազմվեն քիւրդերից եւ Կովկասից գաղթած լեռնականներից։

—Ինչպէս Կ. Պոլսից հաղորդում են, Թիւրքպարսկական սահմանի վրա ապրող ջաֆների ցեղը ներս խուժեց պարսկական Քիրմանշայ նահանգը, որ սկսեց հրդեհել ամէն բան եւ կողոպտել։ Այդ առիթով պարսկական դեսպանին հրամայվեց բողոք ներկայացնել Բ. Դրանը եւ պահանջել վարձատրութիւն ու թիւրքպարսկական սահմանի կանոնաւորումը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

4 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 4-ին Նորին Բարձրութիւն Թագաժառանգը Պետերբուրգից ուղեւորվեց Օրլովի նահանգը։ Նորին Բարձրութիւնը ուղեկցում է կոմս Վորոնցով-Դաշկով։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Լուրեր են պատում, թէ Դէվէտ անցաւ Վալ գետից եւ թէ նրա հետ միացան Տրանսվալի բօէրական զօրաբաժինները։ Վերջին տեղեկութիւններին նայելով բօէրները, Յուրֆոնտէյնի եւ Կալֆոնտէյնի վրա գործած անաջող յարձակումից յետոյ նահանջեցին, բաւական մեծ կորուստներ ունենալով։ Ենթադրում են, որ նրանք կորցրին 60 սպանված եւ վիրաւորված։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրները ներս խուժեցին Էբէրդին, որ 40 մղոն հեռու է Գրաաֆրէյնէտից եւ գտնվում է նրա հարաւակողմում։

ԲՈՒԼՎԵՐԳԵՄՊՏՕՆ։ Այստեղի առեւտրական պալատում Բօղբերի ճառ արտասանեց, որի մէջ ասաց, թէ առեւտրական պալատները պէտք է դառնան հսկող յանձնաժողովներ, որպէս զի նախապատրաստական միջոցներ ձեռք առնեն մօտեցող մեծ միջազգային առեւտրական մրցութեան համար։ Անգլիական ազգը զօրութեամբ զինված գնում է ապագայի դէմ յանդիման, որը անյայտ է։ Ամբողջ Եւրօպան զինված է. միլիոններ են ծախսվում զինուորական փորձերի համար եւ քիչ արդիւնքներ են ստացվում։ Այն գինը, որ վճարվում է նոր երկիրներ՝ պատերազմի միջոցով ձեռք բերելու համար, նշանաւոր չափով բարձրացնում է նուաճած երկիրների արժէքը։ Այս պայմաններում ոչ մի պետութիւն պատերազմ չի սկսի հողեր տիրապետելու համար։ Այս պատճառով ճառախօսը յոյս ունի, որ ճգնաժամի հասնելու ժամանակ պատերազմի մասին խօսք չի լինի, որովհետեւ պատերազմը յաճախ ծագում է կրքերի բորբոքումից, մինչդեռ առեւտրական-արդիւնագործական գործերը, որոնք կապված են ազգերի բարեկեցութեան հետ, հիմնված են խելքի եւ բանականութեան վրա։ Բօղբերի աւելացնում է, որ քանի խելքն ու բանականութիւնն են ղեկավարում ազգերը, պատերազմը քիչ հաւանական է։ Քսաներորդ դարում հարց կարող է լինել միայն արդիւնագործական մրցութեան մասին. այս ասպարէզում Ամերիկայի Միացեալ-Նահանգները եւ Գերմանիան ամենաահաւոր մրցակիցներ կը լինէին Անգլիայի համար։ Ճառախօսը այս երկու երկիրների ջանքերը արդարացի է համարում եւ եռանդով առաջարկում է բարելաւել առեւտրական-տեխնիկական առարկաների դասաւանդման եղանակները Անգլիայում։

5 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հաստատել Թիֆլիսի հոգեւոր սեմինարիայի ռեկտոր Գերասիմին Վոլգի եպիսկոպոս եւ առաջնորդական փոխանորդ Սարատովի վիճակում։

ՄԱՏԷՅՍՖՕՆՏԷՆ։ Մօտ հարիւր բօէրներ մտան Սէդերլանդ, ընդհատեցին հեռագրական հաղորդակցութիւնը եւ կողոպտեցին խանութները։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հաղորդում է Պրետորիայից, թէ երեք հազար բօէրներ միացան Կարօլինայի մօտ։ Կոլվելի թռուցիկ զօրաբաժինը Վենտս Ռուդերսգեկի մօտ կռիւ ունեցաւ բօէրների հետ, որոնք մեծ կորուստներով յետ նահանջեցին։ Երեք հարիւր բօէրներ երէկ մտան Էբէրդին, Գրաաֆրէյնէտից դէպի հարաւ-արեւմուտք, եւ կողոպտեցին խանութները։ Հետեւակների մի հարիւրեակ եւ մի քանի հեծեալներ քաղաք հասան կէսօրից յետոյ։ Նրանց երեւալուց յետոյ՝ բօէրները նահանջեցին։

ՍՏԱՆԴԵՐՏՕՆ։ Ստէյն, որ, լիազօրութիւն ստանալով այստեղի շրջակայքում ապրող բօէրներից, գնացել էր համոզելու իր հայրենակիցներին, որ անձնատուր լինեն, կալանաւորված է եւ ուղարկված Պիէտրէտիֆ։ Նրան մեղադրում են պետական դաւաճանութեան մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Լուր են հաղորդում պատերազմական մի քանի գերիների փախուստի մասին Ցէյլօնից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Պատերազմական դրութիւն է յայտարարված բոլոր շրջաններում, բացի Կապշտադտի, Սիմօնստաունի, Բինբերգի, Պօրտէլիզաբէտի, Իստ-Լօնդօնի, Տրանսկէի, Տիմբուլանդի եւ Գրիկուլանդ-Օստի շրջաններից։ Հրատարակված է յայտարարագիր, որով արգելվում է Կապլանդի բոլոր բնակիչներին, բացի աստիճանաւորներից եւ զինուորականներից, զէնք եւ ռազմամթերք պահել. զէնքերը եւ ռազմամթերքը պէտք է յանձնվեն իշխանութիւններին մինչեւ յունվարի 19-ը։

ԼՕՆԴՕՆ։ Ծովային մինիստրութիւնը հեռագիր ստացաւ, թէ «Սիբիլ» շրջանաւակը, որ մտադիր էր նաւաստիներ ափ իջեցնել՝ բօէրների ճանապարհը Ստէյնսբօնֆօնտէյնի եւ Լանբերտսբոյի մօտ կտրելու համար, խորտակվեց։ Օգնութիւնը ուղարկված է։

ԳՈՒԼԼ։ Նորից երկու մարդ մեռան «Տրիաբի» շոգենաւից։ Հիւանդութիւնը, տեղեակ մարդկանց կարծիքով, թոքային ժանտախտ է, որ աւելի վտանգաւոր է, քան ուռոյցքային ժանտախտը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրները երկու անգամ փորձեցին վերցնել Բարտէյնստ, բայց յետ մղվեցին։ Մի քանի բօէրներ ընկան քաղաքը պաշտպանող կամաւորների գնդակներից։

ՊԵԿԻՆ։ Այսօր, կէսօրից յետոյ, օտարերկրեայ դեսպաններին յանձնվեց խաղաղութեան արձանագրութիւնը եւ նրան վերաբերեալ կայսերական հրամանը։ Մի եւ նոյն ժամանակ չինական լիազօրները յանձնեցին դեսպաններին կայսրի հեռագիրը, որի մէջ ցանկութիւն է յայտնված, որ Տակուի մարտկոցները չը կործանվեն, այլ գրաւվեն օտարերկրեայ զօրքերից, որ զէնքի ներժուծութեան արգելքին որոշ ժամանակամիջոց դրվի եւ պատժողական արշաւանքները դադարեցնվեն։ Բացի դրանից կայսրը առաջարկում է իր լիազօրներին հետաքրքրող հարցերը տալ դեսպաններին. որքան տարածութիւն կը գրաւվի դեսպանատների համար, որքան հոգի կը մնան Պեկինում դեսպանատների պաշտպանութեան համար զօրքերի հեռանալուց յետոյ, ենթադրաբար որքան կը լինի զինուորական գործողութիւնների ծախսը եւ վերջապէս, երբ օտարերկրացիները ենթադրում են վերադարձնել չինացիներին Պեկինի կառավարչական հիմնարկութիւնները։ Ցանցաւորների պատժի մասին կայսրը չէ յիշատակում իր հեռագրի մէջ։

ԲԵՐԼԻՆ։ «Reichsanzeiger» յայտնում է, որ սահմանված է պրուսական թագի նոր շքանշան մատուցած ծառայութիւնները վարձատրելու համար։ Նոր շքանշանը կունենայ մի աստիճան եւ կը բռնէ Սեւ Արծուի եւ Կարմիր Արծուի մեծ խաչի շքանշանի միջին տեղը։

6 յունվարի

ՍՏԱՆԴԵՐՏՕՆ։ Կոլվիլի զօրախումբը ենթարկվեց յարձակման բօէրների կողմից, որոնց թիւը հասնում էր 1000-ի. բրիտանական հեծեալների վերջապահները յարձակվեցին նրանց վրա եւ ստիպեցին 800 հոգու նահանջել. մնացածները դրանից յետոյ խիստ յարձակում գործեցին անգլիական սայլախմբի վրա, բայց յետ մղվեցին ծանր կորուստներով. նրանցից սպանվեցին եւ վիրաւորվեցին 15 հոգի։

ԿԱՊՇՏԱԴԱՏ։ Բօէրները, որոնք խուժել են Կապի գաղթականութեան արեւմտեան մասը, այլ եւս առաջ չեն գնում. ցրված զօրաբաժինները նահանջում են եւ միանում գլխաւոր զօրաբաժնին։ Կալվինիայում եւ Միտուլանդում նրանք աւելի գործունեայ են. նրանք գնում են դէպի Վիլլսու�։ Սաստիկ կռիւ տեղի ունեցաւ Մուրրէյսբուրգի մօտ դեկտեմբերի 29-ին եւ այդ կռուում անգլիացիները կորցրին 20 մարդ։ Մօտ հարիւր հոլանդացիներ միացան ներս խուժած բօէրների հետ։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական հաղորդագրութիւնը ասում է, թէ որովհետեւ լարված դրութիւնը ամբողջ անցած տարվայ ընթացքում խանգարել է թագուհու նեարդային սիստեմը, ուստի բժիշկները հարկաւոր համարեցին խորհուրդ տալ նորին մեծութեան հանգստութիւն պահպանել իր սենեակներում եւ հրաժարվել պետական գործերով զբաղվելուց։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հաղորդում է Պրետորիայից. «Նոր-զելանդական եւ աւստրալիական զօրքերը յարձակում գործեցին Վենտերսբուրգից 8 մղոն հեռու գտնվող 800 բօէրների վրա եւ բոլորովին ջարդեցին նրանց։ Գտնված են շատ ձիեր առանց ձիաւորների. մեծ քանակութեամբ թամբեր եւ կաշուէ իրեղէններ աւար են առնված. անգլիացիների կողմից վիրաւորված է մի հոգի»։

ՎԻԷՆՆԱ։ «Politische Correspondenz» հաղորդում է, թէ բուսինական մինիստր-նախագահը մի ժուրնալիստի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ յայտնեց, որ բուսինօ-բոլգարական տարաձայնութիւնը չէ կարող փոխվել միջազգային հարցի եւ, երեւի, խաղաղութեամբ կը վերջանայ երկու կողմերի մէջ։

7 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 6-ին տեղի ունեցաւ ֆրանսիական գեղարուեստական ցուցահանդէսի հանդիսաւոր բացումը գեղարուեստը քաջալերող կայսերական ընկերութեան դահլիճում։ Ցուցահանդէսը խիստ հետաքրքրական է գեղարուեստի կողմից. ի ցոյց դրված առարկաների թիւը հասնում է 457։

Յունվարի 6-ին Ձմերային պալատի Մեծ-եկեղեցուց կատարվեց թափօր դէպի Յորդանան։ Պատարագը մատուցանում էր միտրոպոլիտ Անտոնի։

ԿՕՈՒՍ։ Թագուհին գիշերը լաւ անցկացրեց. առաւօտեան նա իրան շատ աւելի լաւ էր զգում։

ԲԵՐԼԻՆ։ «Reichsanzeiger» հրատարակեց կայսերական պալատի հաղորդագրութիւնը, որով անգլիական թագուհու ծանր հիւանդութեան եւ կայսրի դէպի Անգլիա ուղեւորվելու պատճառով, յունվարի 8-ին եւ 10-ին ենթադրված մեծ ընդունելութիւնները վերացվում են։

ՕՍԲՕՐՆ։ Պաշտօնական բիւլլետէնը հաղորդում է կէսօրին, թէ թագուհին ոյժերի նուազումն ունի, որի հետ միասին նկատվում են եւ վտանգաւոր նշաններ։

ԼՕՆԴՕՆ։ Ուէլսի պրինցը, որ մտադիր էր ուղեւորվել Սանդրիդէմ, ճանապարհ ընկաւ Օսբօրն։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը ուղեւորվում է Լօնդօն արտակարգ գնացքով Կօնստանտեան դուքսի հետ միասին։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, թէ Վիկտորիա թագուհու տեսողութիւնը նորից սաստիկ թուլացաւ։ Պրոֆէսօր Պագէնշտէխէր գաղտնի կերպով կանչված է Վիսբադէն։ Ծննդեան շաբաթվայ մէջ թագուհուն թեթեւ կաթուած պատահեց։

ԼՕՆԴՕՆ։ Տեղեկութիւնները թագուհու առողջական դրութեան մասին չափազանց յուզիչ են։ Մօտիկ ազգականները հաւաքվում են հիւանդի անկողնի շուրջը։

ԼՕՆԴՕՆ։ Ուէլսի իշխանուհին ուղեւորվեց Օսբօրն. նրա հետ միասին ուղեւորվեց նաեւ Եորկի դուքսը։

ԼՕՆԴՕՆ։ Բիւլլետէն, երեկոյեան 6 ժամին։ «Թագուհու ոյժերը օրվայ ընթացքում բաւական լաւ էին եւ կան թեթեւ լաւացման նշաններ»։

Երեկոյեան 9 ժամին։ Այստեղ ստացված տեղեկութիւններին նայելով՝ թագուհու առողջական վիճակի մէջ նորից տեղի ունեցաւ վատթարացումն։ Ըստ երեւոյթին, ոյժերի նուազումը կանգ է առել։

ԼՕՆԴՕՆ։ Ուշ երեկոյեան բարեյաջող լուրեր տարածվեցին թագուհու առողջական վիճակի մասին, բայց այդ լուրերը չեն հաստատվում. ընդհակառակը դրութիւնը շարունակում է մնալ չափազանց լուրջ եւ ամենամեծ երկիւղի տեղիք է տալիս։

Անգլիական «Միներվա» շրջանաւը հրաման ստացաւ ճանապարհ ընկնել դէպի Ֆլիսինգէն, որպէս զի Անգլիա տանի Վիլհելմ կայսրին եւ Կօնստանտեան դուքսին.

8 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 7-ին Վարշավայի երկաթուղային գծով Բերլինից Պետերբուրգ վերադարձան Հէսսէն-Դարմշտատտեան մեծ դուքսը եւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ. միեւնոյն գնացքով Պետերբուրգ հասաւ Սաքսոնեայի դքսուհի, Սաքսէն Ալտենբուրգեան իշխանուհի Ելենա Գէօրգիեվնա։

Յունվարի 7-ին Բարձրագոյն պալատի օբէր-շէնկ կոմս Ստրոգանով եւ Նորին Կայսերական Մեծութիւն Մարիա Ֆեոդորովնայի օբէր-հօֆմէյստերինա կոմսուհի Ստրոգանովա տօնում էին իրանց ամուսնութեան յիսնամեայ տարեդարձը։ Տօնախմբութիւնը իրանց ներկայութեանը արժանացրին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնա Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ, Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ Ամուսնու հետ, Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Ամուսնու հետ եւ Մեծ Իշխան Սերգեյ Միխայլովիչ։

ԼՕՆԴՕՆ։ Հեռագիր Օսբօրնից, երեկոյեան ժամի 8-ից. «Թագուհին հոգեվարքի մէջ է. հարցը միայն ժամանակի մէջն է»։

Կէս գիշերին կազմված բիւլլետէնը ասում է. «Թագուհու դրութիւնը կիրակի երեկոյեան աւելի եւս լուրջ դարձաւ. թուլութիւնը սաստկանում է. կերակուր ընդունելու դժուարութիւնը աւելանում է։

Հեռագիրը Կօուսից գիշերվայ ժամի 3-ին հաղորդում է. «Թագաւորական ընտանիքը հաւաքվեց թագուհու ննջարանը. վախճանումը սպասվում է բոլէ առ բոլէ։

ԼՕՆԴՕՆ։ Ուէլսի իշխանը Կօուսից գնաց

Լոնդոն, գերմանական կայսրին հանդիպելու համար։

ՖԼԻՍԻՆԳԷՆ։ Վիլհելմ կայսրը եւ Կոնաուտեան դուքսը հասան այստեղ եւ ճանապարհ ընկան Անգլիա։

ԼՈՆԴՈՆ։ Գերմանական կայսրը եւ Կոնաուտի դուքսը հասան այստեղ. Նրանց հանդիպեցին չարինգկրոսեան վոկզալում Ուէլսի իշխանը, Եորկի դուքսը եւ Շլեզվիգ-Հոլշտէյնի իշխան Խրիստիան։ Կայսրը գնաց Բուկինհէյմի պալատը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 2-ին տեղի ունեցած առաջին փոխառութեան վիճակահանութեան ժամանակ՝ 500-ական բուբլի տարան հետեւեալ տոմսերը.

№№ տոմսերի

№№ սերիաների

1։ 2088, 15054, 19828.
2։ 65, 7875, 8255, 12727, 13792, 15874, 18168.
3։ 4734, 9900, 10972.
4։ 501, 708, 5128, 11019.
5։ 781, 7761, 7841, 16736, 18249.
6։ 2445, 3051, 4573, 15123, 16868.
7։ 85, 11008, 12418, 16703.
8։ 2057, 3607, 10501, 11266, 16552.
9։ 2355, 3137, 7822, 19466.
10։ 1709, 2410, 2977, 4243, 14067, 15700, 17575.
11։ 10907, 12314, 12780, 13706, 17551.
12։ 1800, 1841, 9037, 9802, 11228, 15609, 17687.
13։ 1189, 10911.
14։ 12707, 15881, 17454, 18248, 18580, 19295.
15։ 4693, 5541, 9994, 14045.
16։ 7, 1450, 5236, 17162, 17446.
17։ 185, 3968, 7034, 7394, 14691, 15032, 16022.
18։ 671, 2665, 7088, 12217, 15288, 15846.
19։ 6929, 10099, 10239, 11943.
20։ 334, 5785, 10525, 16037, 18089.
21։ 2600, 2667, 11441, 12233, 12427.
22։ 3634, 3909, 7299, 17696.
23։ 1255, 7520, 7597, 10320, 15812.
24։ 1466, 10512, 10580, 17438.
25։ 411, 1434, 4332, 5718, 11395, 12018, 15148, 18634.
26։ 82, 338, 390, 5510, 7685.
27։ 173, 2089, 5179, 13669, 14918, 15610.
28։ 203, 2600, 9178, 10711, 17592.
30։ 8729, 13884.
31։ 268, 6792, 8265, 9908, 11014, 12430, 14165, 14306, 19669, 19919.
32։ 938, 3167, 4581, 9219, 10679, 10896, 11374.
33։ 4294, 5167, 16154, 17326, 18053, 18088, 18909.
34։ 402, 883, 6863, 8666, 10259, 12082, 18229, 19299.
35։ 211, 6751, 11330, 15386.
36։ 2595, 4863, 8119, 11838, 13308, 14192, 14644.
37։ 11079, 12450, 14017, 18047.
38։ 198, 862, 3953, 4119, 9118, 14797, 17834, 18002, 18280, 18325, 18807, 19410.
39։ 2345, 9488, 11370, 11477, 18188.
40։ 3061.
41։ 6112, 11892, 13571, 15653, 15930.
42։ 4086, 9109, 9880, 17997, 16907, 17402, 18746.
43։ 6357, 6677, 15345, 17772, 18112, 18779.
44։ 5673.
45։ 5221, 6364, 7223, 17734, 18359.
46։ 2808, 5004, 6756, 9800, 13471։
47։ 3300, 4122, 8185, 9916, 10325, 16991, 17749, 19011.
48։ 2669, 7279, 9016.
49։ 2445, 3634, 5535, 8765, 10261, 10749.
50։ 268, 632, 8896, 10933, 13708, 17990, 19717.

Տիրաժ ընկած տոմսերը.

4906, 8979, 5298, 3164, 8949, 14827, 19815, 18433 367, 4609, 2402, 6938, 8811, 9838, 1258, 10969, 5342, 17770, 17553, 8385, 11886, 17482, 7719, 3962, 11023, 1445, 19643, 10092, 18975, 13520, 1415, 9572, 3779, 1336, 7768, 19270, 181, 10605, 15422, 7976, 10050, 1896, 2275, 19072, 5176, 19359, 1178, 1483, 9986, 8300, 14723, 16088, 19441, 8188, 15302, 17256, 15532, 3238, 19329, 11742, 10505, 8007, 10150, 5614, 18165, 4004, 13591, 11423, 19382, 12966, 6779, 10176, 6211, 3351, 12089, 1834, 3185, 17916, 11185, 18819, 13695, 10088, 5830, 6675, 8347, 8521, 5275, 8578, 3870, 17757, 4127, 3056, 3443, 2280, 4407, 5208, 6542, 8553, 595, 16556, 17572, 12979, 16170, 14124, 5384, 4141, 17076, 6129, 1847, 12301, 6599, 11497, 14986, 2590. 12861, 6553, 626, 12206, 17534, 4225, 4422, 582, 4696, 13079, 18116, 2869, 2986, 2519, 7781, 17787, 18511, 19016, 17693, 796, 11676, 314, 16259, 17226, 3790, 5661, 380, 1259, 18845, 11401, 14567, 18771.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՍՑՆՈՒՄ ԵՄ Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԻՄ Պ. Պ. ԳՆՈՂՆԵՐԻ,

որ իմ գործակատար Բախչո Մոյսէեվիչ Տէր-Առաքելեանը այս 1901 թւի յունվարի 1-ից այլ եւս ինձ մօտ չէ ծառայում, ուստի խնդրում եմ պ.պ. գնողներին եւ առհասարակ այն անձերին, որոնք ինձ հետ գործ ունեն, այսուհետեւ դիմել անմիջապէս ինձ։ Թիֆլիսի 2-րորդ կարգի վաճառական Գաբրիէլ Զախարեվիչ Գօզալեանց։ 1—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ԱՄԵՆ օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Առվանիցայի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանի տանը, Գուդովիչի փողոցի վրա,

ՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԱՐՁՈՎ

միջին եւ ներքին յարկերում, առաջինը տաս սենեակներից բաղկացած, երկրորդը՝ տասնմէկ։ Գնի մասին դիմել Հաջի-Մատէզ-Բաղր Ռիզաեվին, Սիօնի փողոցի վրա, Զիթախօվի քարավանսարայում։ (Ե. հ. չ.) 8—10

НОВОЕ ФРАНЦУЗСКОЕ ПЕЧЕНІЕ
С. СІУ и К°
PETIT BEURRE
МОСКВА
С. СІУ и К°
24—32 (Ե.)

Ասխաբադի հայոց եկեղեցու համար հարկաւոր է հմուտ երիտասարդ

ՏԻՐԱՑՈՒ

տարեկան ռոճիկ եւ արդիւնք 400 ր. եւ սենեակ. ցանկացողները թող դիմեն՝ Асхабадъ, Благочинному священнику Атовмьянцъ. 3—3

ՄԷՐՎԻ ԱՂՕԹԱՏԱՆ ՀԱՄԱՐ

հարկաւոր է ճեմարանը կամ մի որ եւ է թեմական դպրոց աւարտած քահանայացու, հմուտ լաւ երգեցողութեան, յաջողակ ձայնով, տարեկան 1200 բուբլուց մինչեւ 1500 ր. արդիւնքով։ Ցանկացողներից խնդրւում է դիմել եւ էքզիոմ՝ լուսանկար Սան ... ոս Նազարեանցին։ 2—6

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՖՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կայուն քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մատչելի են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրմանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Մէջայեղեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։ 37—100

Կիրակի, յունվարի 21-ին, 1901 թ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԴԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կը տրվի դեղարուեստական երեկոյ

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Յօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Պարահանդէսին կը լինեն չինական պարեր՝ ազգային հագուստներով և մի ազնուական չինուհի կը բաժանէ սիւրպրիզներ և կոտիլիոնի ընծաներ։

Տիկիններին խնդրում են սանրված լինել չինական ձեւով, իսկ տղամարդիկ՝ ունենան չինական հովհարներ։ Զը ցանկացողները վճարում են տուգանք 50 կոպէկ։

Սկիզբն է երեկոյեան 10 ժամին։

ՄՈՒՏՔԸ 2 Ր. 10 ԿՈՊԷԿ

Նախօրօք տոմսակ ստանալ ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թումանեանցին (Բարեատինսկայա, № 8)։ (չ. 23, յունվ. 5, 9, 13 եւ 18)

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարարական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) *Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարարական հաշուետուութեան։*
Բ) *Առևտրական թուաբանութիւն։*
Գ) *Առևտրական նամակագրութիւն։*
Դ) *Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։*
Ե) *Գեղագրութիւն և ամենավաստ ձեռքերի ուղղելը։*

Պարապմունքները սկսվելու են 1901 թվի յունվարի 20-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն դրատոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պաստի ծախսի վճարելու։ 2—15

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսուն եւ Պօ խ։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 17/30 յունվարի—չոգենաւ՝ ՄԻՆԴՐԵԼԻ, կապիտան ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առևտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 16—20

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԵՑՆԵԼՈՒ

ՀԻՍԻՍՍԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Բաց է ամեն օր առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 12։ Իսկ երեկոյեան ժամի 5-ից մինչեւ 7-ը։ Նիկոլաեվսկայա փողոց, № 70, տելեֆոն № 567։

4—5 *Գործակալ ԱԼԷՔՍԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ՍՆԵԺԿՈՎ*

Ա. Ն. ՄԻԼՕՎԻ ԵՒ Ա. Ն. ԹԱՑԻՐՕՎԻ

Նաւթարդիւնաբերական եւ Առևտրական Ընկերութեան

Հիմնարկողները պատիւ ունեն խնդրելու պ.պ. բաժնէտէրերին (ակցիոներներին) չնորհ բերել Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովին, որ տեղի կունենայ 1901 թւի յունվարի 14-ին, կիրակի. 12 ժամին (կէսօրին), Թիֆլիսում, Լօրիս-Մէլիքովսկայա փողոց, տուն № 6 Զուբալովի, հիմնարկողների գրասենեակում։ Գործերն են. Ընկերութեան վարչութեան անդամների ընտրութիւնը եւ վճիռներ տալը այլ եւ այլ խնդիրների մասին Բարձրագոյն հաստատված կանոնագրութեան համաձայն։

3—3 *Հիմնարկողներ* } *Ալէքսանդր Միլով*, *Ալէքսանդր Թայրով*

ԲՕՓՕՓԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ

Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ

Պարսկական դրութեամբ պատրաստված

հսկողութեամբ

ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ

Առաջին կարգի վկայեալ ժամանակէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն։

Երկար տարիներէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պարսկական դրութեամբ ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հունտէրէն յատկապէս եւ մասնաւոր խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած եմք Շերամապահական կայարանն քննութեան համար։

Ամեն անոնք՝ որք կը փափաքին դիւրամատչելի գիներով լաւ ապրանք գնել եւ ապահով ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ եւ Խօջափարուխով քարվանսարան № 16—17, **Ա. Կ. ԱՐՄԷՆ** *եւ ընկ. գրասենեակը։*

(Ե. հ. չ. 24—30

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Января 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27